լինի Դարբանդ, և մեծին Պետրոսի նման մի նշանաբան թողած լինի իրեն զալստեանը յիշատակ, ինչ և իցէ Դարբանդի բերդը քանի անգամ նորոգուած է երեւում, ինչպէս հետքերը ցոյց են տալի. և վերեւը յիշած արապական արձանագրութիւնից երեւում է, որ Արապացիք կամ Ալանք և կամ Աղուանք նորոգած լինին, բայց աւելի հաւանական է, որ Աղուանք չինած լինին բերդը և նորոգած, զոր օրինակ՝ Վաչական և Ջուանշիր, որք մեծագործութեամբ հռչակուած են պատմութեան մէջ։

Այս մասին դարձեալ դիմելու է ազգային և ընդհանուր պատմութեանը, և մանաւանդ Աղուանից պատմութեանը։ Այս բերդաքաղաքը Դարբանդ շատ անգամ շատ դարերում եղել է թատրոն ողբերգութեան քանի քանի ազգերի՝ Հայոց, Աղուանից, Ալանաց, Հոնաց, Եղերաց, Պարսից, Արապացւոց, Թաթարաց և Հադարացւոց, ուստի և երբեմն շէնացել և երբեմն ամայացել է։ Պարսից պատմութիւնը (Դարբանդ — Նամէ) աշխատում է միշտ պարսից սեպհականացնել այս բերդի շինութիւնը, ինչպէս և ամեն նշանաւոր շինուածքներն։ Ուստի և գրում է թէ «Կաւատ պարսից թագաւորը հալածելով Հաչաններին Խաքան թագաւորին՝ գրաւեց Դարբանդ քաղաքը», և թէ «Ցազկերտ հալածեց Լեզկիներին և առաւ Դարբանդը»։

Եւ թէ «Մահմէտ մարգարէի հրամանաւն Սալման զօրապետը ահագին բազմութեամբ զօրաց այս կողմերը արշաւելով հալածեց Պարսից և Լեզկիներին ու առաւ Դարբանդ բերդը, և հրամայեց երկաթի դուռն քցել բերդի վրայ իբրեւ ամրութեան նշան, և անուանել այնուհետեւ Դամիր Ղ·փի, և պահել իբրեւ դուռն և կապանք Պարսկաստանի և Աղուանստանի, հիւսիսական ազգերի յարձակմունքների առաջն առնելոյ համար, և այն ժամանակից (գրում է Դարբանդ Նամէն) Մահմէդական կրօնը տարածուեց Պարսկաստանում և Աղուանստանում Ալիական շիա աղանդով։ Յետոյ գալիս է Օմարի հրամանաւն Արի Մուսուլ Հադարացի զօրապետը օսմանցի, և իշխելով Դարբանդին տարածում է Օմարական սիւննի աղանդը, որ ընդունում են և ամեն լեռնական ազգերն։ (Գրում է Դարբանդ Նամէն) Հադարացիներից մեծ կոտորածով խլում են Խազիրը (Հաչաններն) և ամ-